# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ


Ք. Սիսիան, Սիսական 31
Հեռախոս (0283)2-33-30 ֆաքս (0283)2-33-30
Էլ. հասցե http://www.sisian.amէլ փոստ sisiancity@mail.ru, sisian syuniq@mta.gov.am


**Թիվ 460**
***30 մարտի 2018թ.***

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
Ռ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

***Հարգելի պարոն Սարգսյան***

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 27-ի նիստի թիվ 31-Ա, 32-Ն, 33-Ն, 34-Ն, 35-Ա և 36-Ա որոշումները՝ կից հավելվածներով:

Առդիր՝ 134 թերթ:

Վ. ՄԻՐԱՔՅԱՆ

*Կատ.՝ Հ. Բլբուլյան*

...ՏԱՐԱՆԻ
...ՈՒԹՅԱՆ
3294
«17» 04 2018թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

27 մարտի 2018 թվականի թիվ 31-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 12 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

Հաստատել համայնքի ղեկավարի ներկայացրած Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 27-ի նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի զարգացման ծրագիրը հաստատելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 29(Ն) որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:
4. Սիսիան քաղաքում 2018 թվականի գարնանը և աշնանը ծառերի հատում ու էտ իրականացնելու մասին:
5. «Սիսիանի համայնքի թիվ 1 ՆՈՒՀ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում Սիսիանի համայնքի ղեկավարի ներկայացրած թեկնածուի նշանակմանը համաձայնություն տալու մասին:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ 0

1. ԱՅՎԱԶՅԱՆ Վ.
2. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Ա.
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.
4. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Դ.

5 ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

7. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.

8. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ

9. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.

10. ՂԱՐԻԲՅԱՆ Բ.

11. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

12. ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

**Համայնքի ղեկավար** **Ա. Սարգսյան**

2018թ մարտի 27
ք Սիսիան